

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. HÉSYCHIUS DE JÉRUSALEM. *Homelies sur Job. Version arménienne.* — Edition, introduction et notes par Charles Renoux, traduction par Charles Mercier et Charles Renoux. — In: F. Graffin, *Patrologia Orientalis*, t. 42, fasc. 1—2, № 190—191, Brepols, Turnhout/Belgique, 1983, 612 p.

ԻՍԻՔԻՈՍ ԵՐՈՒՍԱԼԵՄԱՅԻ, Մեկնություն Հորի (ճայերեն քաղվանություն)

Իսիքիոս Երուսաղեմացու Վճռի մեկնություններն այս թարգմանական գրականության այն արժանավոր հուշարձաններից է, որոնց օտարալեզու սկզբնագրերը մեզ չեն հասել։ Ավելին, բյուզանդական և մյուս բոլոր քրիստոնեական գրականությունները որևէ հիշատակ անգամ չեն պահպանել Երուսաղեմի նշանավոր քարոզչի այս ստեղծագործության մասին։ Դրանով է բացատրվում նրա նկատմամբ եվրոպացի հայրաբանների տածած առանձնակի հետաքրքրությունը, որի արտահայտություններից մեկն էլ հենց գրախոսվող աշխատության լույսընծայումն է։

Հուշարձանի հայերեն բնագիրն առաջին անգամ լույս է տեսել Մխիթարյան միաբան Փ. Զրաքյանի աշխատասիրությամբ որպես Քժանգարան հայկական հին և նոր դպրութեանց մատենաշարի 5-րդ հատորը (Վենետիկ, 1913), նույն թվականին Գ. Նահապետյանը իտալերեն լեզվով դրված մի հոդվածով, որում հիմնականում ամփոփված էին Փ. Զրաքյանի ներածության եզրակացությունները, այդ բնագրի վրա է հրավիրում եվրոպացի հետազոտողների ուշադրությունը («Bes-saricene», t. 29, 1913 p. 452—465), Հետագայում բանասեր Շառլ Մերսիեն (մահ. 1978 թ.), որը մասնագետներին հայտնի է հայագիտական մի շարք կարևոր հետազոտություններով, ձեռնարկում է Իսիքիոսի երկի Ֆրանսերեն թարգմանությունը, որի վերանայումն ու մշակումը թարգմանչի իսկ կամքով հանձնարարվում է հայագետ Շառլ Ռենուին։ Վերջինս հաջողությամբ իրականացնում է այդ գործը, որի ընթացքում նկատելիվ Փ. Զրաքյանի հրատարակության թերությունները, մանավանդ նրա զգալի պակասավորությունը, ձեռնարկում է հուշարձանի մի նոր հրատարակության։ Այսպիսով

հրապարակ է հանվում մի ընդարձակածավալ և լուրջ հետազոտություն, որն ընդգրկում է Իսիքիոս Երուսաղեմացու Վճռի մեկնության հայերեն քննական բնագիրն ու նրա ֆրանսերեն թարգմանությունը՝ ուղեկցված սպառիչ ներածական ուսումնասիրությամբ և մանրակրկիտ պատմաբանասիրական ծանոթագրություններով։

Հուշարձանի համակողմանի քննությունը Շ. Ռենուն տվել է աշխատության հանգամանալից ներածության մեջ (էջ 11—61), որը բաժանված է երկու ենթագլխի՝ առաջինը նվիրված հայերեն բնագրի պատմությանը (էջ 11—28), իսկ երկրորդը՝ բուն մեկնության բնութագրմանը (էջ 28—59)։ Ինչպես Իսիքիոսի երկի, այնպես և գրախոսվող աշխատության մասին քիչ թե շատ լիակատար պատկերացում տալու համար նպատակահարմար ենք համարում ստորև ներկայացնել այդ ներածության հիմնական դրույթները։

Եթե վաղմիջնադարյան Հայաստանի մշակութային հարարերությունները Կապադովկիայի, Ասորիքի, Կոստանդնուպոլսի և Աղեքսանդրիայի հետ բավականաչափ լուսաբանված են հայագիտական գրականության մեջ, ապա նույնը չի կարելի ասել Հայաստանի և Պաղեստինի միջև գոյություն ունեցած նույն բնույթի կապերի վերաբերյալ։ Դա բացատրվում է նրանով, որ հայ մատենագրությունը թեև նշանակալից, բայց սակավաթիվ թարգմանական երկեր է ժառանգել սլաոնաստիյան գրականությունից, այն է՝ եվսեբիոս Կեսարացու Վեկեղեցական պատմությունն ու «մամանկագրությունը», Կյուրեղ Երուսաղեմացու Վճռումն ընծայության աշխատությունը, Երուսաղեմյան Ճաշոց-ծիսարանը (հայտնաբերված Շ. Ռենուի կողմից) և, վեր-

չապես, Իսիրիոս Երուսաղեմացու մի քանի գործերը, որոնց թվում ամենաարժեքավորը խնդրո առարկա մեկնությունն է\*։

Իսիրիոս Երուսաղեմացին, որը գրավոր աղբյուրներում հայտնի է «երէց և վարդապետ» մականուններով, գործել է V դարի առաջին կեսին (մահ. 450 թ. հետո), չիմնականում զբաղվելով քարոզչությամբ Երուսաղեմի Ս. Սիոն եկեղեցում (էջ 38)։ Հայկական ձեռագրերը նրա անունը հիշատակում են Իսիֆոս, Իսիֆոս, Իսիֆոս, Լիսիֆոս, Եսիֆոս, Եսիֆոս, Եսիֆոս, Սիֆոս, Սիֆիմոս և Սիֆիմոս աներով (էջ 12)։ Բացի «Զորի մեկնությունից» հայերեն թարգմանությամբ մեզ են հասել նաև Իսիրիոսի «Եսայա մեկնությունը» (\*), Աստվածածնին և Հովհաննես Մկրտչին նվիրված երկու ձեռներ, որոնցից երկրորդի հունարեն սկզբնագիրը նույնպես կորած է, ինչպես նաև որոշ հատակոտորեն Կաթողիկոս թղթերի մեկնությունից (էջ 12)։

Արդեն ասվեց, որ հունական աղբյուրները որևէ հիշատակություն չեն պահպանել Իսիրիոսի «Զորի մեկնության» մասին, սակայն, ինչպես համոզիչ կերպով ցույց է տալիս Շ. Ռենուն, այս հանգամանքն ամենևին հիմք չի տալիս կասկածի տակ դնելու երկի հեղինակային պատկանելությունը։ Նախ՝ բոլոր հայերեն ձեռագրերը տվյալ երկասիրությունը միարժեք ընծայում են Իսիրիոսին, և երկրորդ՝ «Զորի մեկնությունն» իր լեզվաբանական առանձնահատկություններով, բառապաշարով և միևնույն թեմաների նույնօրինակ հանգամանքն ամենևին հիմք չի տալիս կասկածի տակ դնելու երկի հեղինակային պատկանելությունը։ Իսիրիոսի հունարենով հայտնի գործերի հետ (էջ 23—25)։

«Զորի մեկնությունն» Իսիրիոսը քարոզել և գրի է առել ամենայն հավանականությամբ 439—451 թթ. միջև, որի օգտին են խոսում Շ. Ռենուի բերած մի շարք լուրջ ժխտագիտական և դավաճանական փաստարկները (էջ 38—41)։ Մեկնությունը քարոզվել է եկեղեցում, հավատացյալների խառը լսարանի առջև (էջ 36—38)։ Այն աչքի է ընկնում ճարտասանական հնարանքների առատ և նրբաձաշակ գործածությամբ (էջ 24—25, 31), հետևում է զլխավորապես բանասիրական-քննարկական մեկնության սկզբունքին, թեև նրան խորթ չեն նաև այլարանական եղանակի գրականությունները (էջ 53, 59)։

Մեկնությունն իրենից ներկայացնում է միասնական մտահղացում ունեցող, բայց ինքնուրույն

ձեռքերից կազմված մի կուռ ժողովածու, որոնցից յուրաքանչյուրում գլուխ առ գլուխ, տուն առ տուն մեկնարանվում են «Զորի գրքի» հերթական գրվագները։ Ընդ որում, ժողովածուի ինքնուրույն միավորներում խստորեն պահպանված են ճառագրական ժանրին բնորոշ բոլոր հիմնական հատկանիշները (էջ 28)։ Ժողովածուում ընդգրկված բոլոր ձեռներն ունեն հետևյալ կառուցվածքը. ա) մեկնարանվող աստվածաշնչական գրվագի բնագիրը, բ) նախերգանք, գ) գրվագի տուն առ տուն մեկնությունը, զ) քարոյախրատական վերջաբան և ե) փառաբանություն (էջ 28—35)։ Հոստորական-ճարտասանական արժանիքներով առանձնապես աչքի են ընկնում ձեռքերի նախերգանքները (էջ 31), որոնցում հիմնականում շոշափվում են հոգևոր պայքարի ընդհանուր գաղափարները (էջ 32)։ Վերջապահներում, որոնք նախերգանքների համեմատ ավելի համառոտ են, մեկնվող գրվագի վերջին միտքը սովորաբար հանգեցվում է մի որոշակի քարոյախրատական խրատի (էջ 34—35)։ Ինչ վերաբերում է բուն մեկնության բովանդակությանը, ապա այստեղ ուշագրավ է հատկապես նյութական իրողության մեջ հոգևոր իրողության բացահայտման միտումը (էջ 52), որը գրանցվում է աստվածաշնչական բնագրի բառական ձևակերպումներում գիմնալիկ վերհանման ճանապարհով (էջ 50—54)։ Այդ եղանակով Զորի կրած շարժարանները նույնացվում են Քրիստոսի շարժարանների հետ (էջ 55—56), Զորի իր վարքով հանգեցնում է բերվում որպես օրինակելի քրիստոնյա (էջ 56—57), նաև՝ որպես ճշմարիտ հավատի համար պայքարող մարտիկ (էջ 57—59)։

«Զորի մեկնության» հայերեն թարգմանությունը, դատելով նրա լեզվական բնութագրից, նախորդել է հունարեն դպրոցի գործունեության ժամանակաշրջանին։ Միանալով Ն. Ակինյանի կարծիքին, Շ. Ռենուն բացառված չի համարում, որ թարգմանությունն իրագործվել է V դարի վերջում Երուսաղեմի հայկական համայնքի շրջանակներում (էջ 12)։ Թեև հայերեն բնագիրն ամենևին գերծ է հունարեն լեզվի ազդեցությունից (էջ 12), այնուամենայնիվ հունարեն նախօրինակը նրանում թողել է որոշ նկատելի հետքեր (էջ 22)։ Այսպես, օրինակ, հայերեն թարգմանության մեջ հաճախակի են հունարեն բառարարությունների լատենման դեպքերը։ զեռեռաբիշի, զեռեռաբոյութիւն, քաղաքաբաբութիւն, իմաստասիրութիւն, մտախաբեղութիւն և այլն։ Նույնքան հաճախակի են ածականի զայն վերջածանցով կազմված ձևերի գործածության դեպքերը, որոնցով վերարտադրվում են հունարեն ածականի համեմատական աստիճանի կազմությունները։ մեծագլին, փայծառագլին, առա-

\* Շ. Ռենուն հույս է հայտնում, որ մի օր հրապարակ կհանվեն նաև Հովհաննես և Յուզիան Երուսաղեմացիների երկերի հայերեն թարգմանությունները, քանի որ այդ հեղինակների անունները հաճախ են հիշվում հայկական ձեռագրերում (էջ 11)։

ելիքային և այլն: Հանդիպում են նաև հունարենին համապատասխանող շարահյուսական և դարձվածաբանական կառուցվածքներ: Բացի այդ, թարգմանության մեջ առկա են որոշ բանաստեղծություններ, որոնք բացատրելի են միմիային հունարեն նույնարմատ բառերի զուգադրումով: Այս բոլորով հանդերձ «Հորի մեկնություն» հայերեն թարգմանությունը բնութագրվում է լեզվի այնպիսի մաքրության, որ հիշեցնում է հայկական մատենագրության դասական շրջանի հուշարձանները (էջ 12):

Իսթրիոսի երկը լայն տարածում է գտել հայ իրականության մեջ (էջ 14—19): Այն մեզ է հասել երկու ամբողջական ընդօրինակություններով, որոնցից մեկը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. № 8429, 1414 Բ), մյուսը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում (ձեռ. № 339, 1298 Բ.): Վերջինիս մի մասնակի ընդօրինակությունը, կատարված 1850-ական թթ., գտնվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում և ընդգրկում է 1, 4, 5, 8, 11, 12 ճառերը (ձեռ. № 216): Հայտնի են նաև «Հորի մեկնություն» մի քանի խիստ համառոտ ընդօրինակություններ (Սեբաստիայի Ս. Նշան եկեղեցու ձեռ. № 153, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 1138 և № 1426): Մեկնության սկզբնամասը (առաջին ճառի նախբանբեր և Հորի գրքի 1,1 տան մեկնությունը) ընդգրկվել է XIII դարի մատենագետ Գրիգոր Աբասյանի նշանավոր «Պատմություն» գրքում (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 1879, Երևանյան Հայոց պատրիարքարանի ձեռ. № 3325, Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռ. № 47): Բացի այդ, Իսթրիոսի երկը, համառոտագրված և խմբագրված ձևով, տեղ է գտել Հովհաննես Վանականի «Հորի մեկնության» քաղվածքում, իսկ նրա միջոցով՝ նաև Գրիգոր Տաթևացու «Լուծմունք Յովբայ» աշխատության մեջ:

Ինչպես նշվեց, Իսթրիոսի երկի հայերեն թարգմանությունը պահպանվել է երկու ամբողջական ընդօրինակություններով: Սակայն այդ երկու ընդօրինակություններն էլ ընդգրկում են միայն «Հորի գրքի» առաջին քսան գլուխների մեկնությունը՝ ամփոփված 24 ճառերի մեջ: Հաջորդ քսաներկու գլուխների մեկնությունը ուղղակի ձեռագրական ավանդույթով մեզ չի հասել: Ուստի հետազոտողների առջև բնականաբար ծառանում է հետևյալ հարցը. արդյոք մենք դորձ ունենք մի մասնակի թարգմանության հետ, թե՞ ժամանակին գոյություն ունեցած հայերեն ամբողջական թարգմանությունից մեղ է հասել միայն մեկնության առաջին մասը, ինչից բարդանում է մանավանդ այն հանգամանքով, որ Հովհաննես Վանականի վերահիշյալ քաղվածքում

«Հորի գրքի» 20,29 տան մեկնությունից հետո ունի հետևյալ նշումը. «Վճարեցաւ Եսայիքին, և այժմ Դաւիթ վարդապետին որ Քորայրեցի կոչիր» (Ջրաքյան, էջ 18), այսինքն՝ Իսթրիոսի քաղվածքներին Վանականի երկի շարունակության մեջ փոխարինում են Քորայրեցու քաղվածքները: Դա նշանակում է, որ դեռևս XIII դարում Իսթրիոսի մեկնությունը հայ իրականության մեջ հայտնի է եղել մեղ հասած վիճակով: Սակայն, ինչպես ժամանակին նկատել է երկի առաջին հրատարակիչ Ք. Ջրաքյանը, Դաւիթ Քորայրեցուն վերագրվող քաղվածքները ոճական առանձնատվություններով, բառապաշարով, մեկնողական եղանակով, հակահուլայական ոգով, Երուսաղեմին վերաբերող ակնարկներով և, վերջապես, Հորի ու Քորայրեցու շարաբանների նույնացման միտումով լիովին համահունչ են Իսթրիոսի երկի առաջին մասին: Նըշված փաստերն աշխատասիրողին արդարացիորեն հիմք են տվել ենթադրելու, որ Վանականի աշխատության մեջ Քորայրեցու անունով մատնանշված քաղվածքներն իրականում բխում են Իսթրիոսի մեկնության շարունակությունից: Ե. Ռենուն, Ք. Ջրաքյանի բերած փաստարկներին ավելացնելով ևս մի քանիսը, ավելի հաստատուն է դարձնում այս եզրահանգումը (էջ 20—21):

Իր աշխատության ներածության մեջ (էջ 42—50) և մանավանդ բնագրին ու նրա ֆրանսերեն թարգմանության ուղեկցող տողատակի ծանոթագրություններում Ե. Ռենուն զգալի տեղ է հատկացնում հայերեն թարգմանության աստվածաշնչական բնարանների քննությանը՝ պարզելու համար այն հարցը, թե Աստվածաշնչի ինչպիսի բնագիր է օգտագործել Իսթրիոսը: Խնդրի լուծումը որոշակի դժվարություն է ներկայացնում այն պատճառով, որ բուն մեկնության բնարանները հաճախ շեղվում են ձառերի սկզբում զետեղված աստվածաշնչական դրվագների բնագրից՝ մի հանգամանք, որին կարելի է տալ հետևյալ հավանական բացատրությունը. թարգմանիչը, ըստ երևույթի, դրվագային ընդարձակ հատվածները պատրաստի վիճակում վերցրել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից, իսկ բուն մեկնության բնարանները վերստին թարգմանել Իսթրիոսի երկի հունարեն նախօրինակից (էջ 42): Եվս մի խոչընդոտ է հանդիսանում այն հանգամանքը, որ նույնիսկ բուն մեկնության մեջ զանազան առիթներով կրկնվող միևնույն աստվածաշնչական վկայականությունները հաճախ տարբերվում են իրարից: Ե. Ռենունի կարծիքով՝ դա տեղի է ունեցել այն պատճառով, որ Իսթրիոսն, ըստ երևույթի, մերթ ընդ մերթ հիշողության մեջ մեջբերել Աստվածաշնչի բնագիրը, իսկ մյուս կողմից այդ տարբերությունների առաջացման մեջ իր դերն է խա-

— ասցև նաև հայ թարգմանիչը (էջ 43), որը գործնականորեն չէր կարող հիշել, թե իր ծավալուն աշխատության նախորդ էջերում ինչպես է թարգմանել կրկնվող աստվածաշնչական վկայակոչումները Այնուամենայնիվ, շնայած այս բոլոր դժվարություններին, Շ. Ռեյնոլին բնագրահյուսական վերլուծության շնորհիվ հաշտվել է պարզել հետևյալը. ա) Իսիդորոսի մեկնության մեջ ներկայացված «Հորի գրքի» բնագիրը տարբեր է Աստվածաշնչի հայերեն կանոնական թարգմանությունից (Զոհրապյան հրատարակություն), թեև հաճախակի նաև համընկնում է նրան (էջ 43—44), բ) այն տարբեր է նաև հայ մատենագրության հնագույն հուշարձաններում հորի գրքից՝ կատարված վկայակոչումներից (էջ 44—46), գ) ուստի միանգամայն բացառվում է այդ բնագրի հայկական ծագումը և, ընդհակառակը, հաստատվում, որ նրա հիմքում ընկած է մի հունական խոսքի նախ, այն է՝ Աստվածաշնչի Որոգիչյան (Վեցիչյան) խմբագրությունը (էջ 46—47), գ) այսպիսով, Իսիդորոսն օգտագործել է Աստվածաշնչի Վեցիչյան օրինակը, որ ապացուցվում է ինչպես բնագրական բնութային տվյալներով, այնպես էլ Որոգիչյան խմբագրությանը բնորոշ հատկանիշների առկայությամբ (ակնարկներ Որոգիչյանի կիրառած բնագրական նշանների վերաբերյալ, Աստվածաշնչի հրեա թարգմանիչներ Ակյուզասի, Սիսարոսի և Թեոդոտիոսի անունների հիշատակումը և այլն, էջ 47—49), ի) առիթից առիթ Իսիդորոսը դիմել է նաև Աստվածաշնչի Յոթնամանից թարգմանությանը (էջ 49—50)։

Նշված հարցերի շրջանակով էլ հիմնականում սահմանափակվում է գրախոսվող աշխատության ներածական հետազոտությունը, որին հաջորդում են մեկնության հայերեն քննական բնագիրն ու հանդիպողի ֆրանսերեն թարգմանությունը (էջ 62—589)։ Աշխատասիրողը փաստորեն վերահրատարակել է Ք. Չրաքյանի պատրաստած բնագիրը, որի հիմքում ընկած է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 339 ձեռագիրը։ Սակայն օգտվելով Մաշտոցի անվան Մատենադարանի № 8429 ձեռագրի տվյալներից, Շ. Ռեյնոլին զգալիորեն բարեփոխել և լրացրել է Իսիդորոսի մեկնության հայերեն բնագիրը։ Վերանայված հրատարակության մեջ առաջինի համեմատ կատարված են հետևյալ էական փոփոխությունները (էջ 37)։

— Երևանյան ձեռագրի հիման վրա լրացվել են վենետիկյան ձեռագրի պակասավոր մասերը։

— Երևանյան ձեռագրի ճիշտ ընթերցումների հիման վրա վերանայվել են Ք. Չրաքյանի առաջարկած որոշ սրբագրությունները։

— Երևանյան ձեռագրի օգնությամբ վերացվել են առաջին հրատարակության մեջ Զոհրապ-

յան Աստվածաշնչի հիման վրա վերականգնված սուրբգրական վկայակոչումների փոքրիկ բացթողումները։

— ուղղվել են Ք. Չրաքյանի հրատարակության մեջ տեղ գտած ակնհայտ աղավաղումները, նախընտրելով երևանյան ձեռագրի ընթերցվածները։

— վերականգնվել է օ հնչյունի առկայության գրությունը, մյուս դեպքերում, սակայն, առաջին հրատարակչի նման պահպանելով բարբառային արտասանության գրավոր արտահայտությունները։

— տողատակում կանոնավոր կերպով նշվել են երևանյան ձեռագրի բոլոր տարբերվածները։

Ինչպես տեսնում ենք, Շ. Ռեյնոլին զգալի աշխատանք է կատարել Իսիդորոս Երուսաղեմացու «Հորի մեկնության» հայերեն թարգմանությունը արդի բնագրագիտության պահանջներին համապատասխան հրատարակելու ուղղությամբ։ Մենք հարկ չենք համարում հատուկ կանգ առնել հրատարակության մեջ տեղ գտած որոշ անճշտությունների, կետադրական անկանոնությունների, սխալ բառանշատումների, վրդակների վրա. դրանք կան և գործնականորեն անխուսափելի են նման հսկայածավալ աշխատանքի համար։ Կան նաև առանձին դեպքեր, երբ երեւանյան ձեռագրի ճիշտ ընթերցումները նշված են տողատակում, իսկ բուն բնագրում տեղ են գտել վենետիկյան ձեռագրի աղավաղված ընթերցվածները։ Հանդիպում են նաև հատուկ նյութաթղթային սխալներ, որոնցից մի քանիսի վրա ուղում ենք հրավիրել մեր հարգարժան գործընկերոջ ուղղորդությունը։ Այսպես.

Հայերեն բնագրի օգի հալեսից նախանձուն և մաշեսից հեռութեամբնա նախադասությունը (էջ 124) ֆրանսերեն թարգմանության մեջ վերադարձվել է հետևյալ կերպ. pour se consumer de jalousie et se morfondre par suite de son éloignement (որպեսզի հալի նախանձից և մաշի իր հեռավորության պատճառով), այսինքն՝ հայերեն հետաքրքիր (հակառակություն, գրգռություն, ասորերեն herā արմատից) բառը չփոթվել է համանուն հետաքրքիր/հետաքրքիր (հեռավորություն) բառի հետ։ Հետ և նախանձ բառադույզը հաճախ է հանդիպում հայ մատենագրության դասական հուշարձաններում։

«Ամենքին ծափ դծափի հարկանէին՝ զարմանալով ընդ ողբերգելի մեծութիւնն» նախադասությունը (էջ 156) թարգմանվել է. tous frappaient des mains, s'étonnant d'entendre un si grand nombre de lamentations (բոլորը ձեռքերն իրար էին զարկում՝ զարմացած իրենց

յաժմ մեծաթիվ ողբերից)։ Այսինչ հայերեն նախադասությունը պարզապես նշանակում է. «բոլոր ձևերն իրար էին զարկում՝ զարմացած (շորի)՝ ողբերգության արժանի վեհությունից»։ Թուրիմացությունն առաջացել է այն պատճառով, որ հայերեն բնագրում սխալ բառանշատում է կատարվել. «զարմանալով ընդ ողբերգելի մեծությունն» նախադասությունը պետք է ուղղել՝ «զարմանալով ընդ ողբերգելի մեծությունն»։

Վասն որոշ յառուցման առաջնադասության հետևելով էթիմոլոգիային, եթե՝ Իմաստութիւն շինեաց իւր տուն, և կանգնեաց ի նմա սինս եւթն (Առակ. Թ, 1) նախադասության (էջ 288) ընդգծված մասը ֆրանսերեն թարգմանության մեջ ստացել է հետևյալ վերածանությունը. c'est pourquoy (l'Ecriture) a parlé en figures de la Sagesse (այդ պատճառով Սուրբ Գիրքը պատկերավոր կերպով է խոսում իմաստության մասին)։ Հայերեն բնագրի ուղղորդող ընթերցման դեպքում, սակայն, պարզվում է, որ յայտնված բառը պետք է գրել մեծատառով (սյուսնակ) և խնդրո առարկա հատվածը թարգմանել՝ «այդ պատճառով Առակներում (այսինքն՝ Առակաց գրքում) իմաստության մասին ասված է, թե...»։

Այս սխալն, անշուշտ, անուշադրության արդյունք պետք է համարել, քանի որ մի այլ տեղ միևնույն միտքը փոխ է թարգմանված (էջ 344—345)։

Նման կարգի թերացումները, որոնց թիվը բարեբախտաբար մեծ չէ, ամենևին չեն ազդում զբախտովող աշխատության բարձր գնահատականի վրա։ Հայագետները չեն կարող իրենց անկեղծ երախտագիտությունը չհայտնել ֆրանսիացի վաստակաշատ բանասերին, որի ջանքերով Իսիդոր Երուսաղեմացու «շորի մեկնության» հայերեն թարգմանությունը գրվել է գիտական լայն շրջանառության մեջ, հասանելի դառնալով հայրաբանական գրականությանը զբաղվող բոլոր մասնագետներին, շարք ենթադրում ուղղություն հրավիրել ևս մի կարևոր հանգամանքի վրա. Ե. Ռենուն խորին ակնածանքով է վերաբերվել հուշարձանի նախորդ հետազոտող Բ. Չրաքյանի կատարած աշխատանքին, փաստորեն վերականգնացնելով այն և լիովին ընդգրկելով իր հրատարակության մեջ։ Նման վերաբերմունքն, ինչ խոսք, գիտական բարոյականության տեսակետից արժանի է ամենայն դրվատանքի և ընդօրինակման։

2. CHARLES RENOUX, *La Chaîne arménienne sur les Epîtres Catholiques. I. La Chaîne sur l'Épître de Jacques*. — In: F. Graffin, *Patrologia Orientalis*, t. 43. fasc. 1, № 193, Brepols, Turnhout/Belgique, 1985, 160 p.

### ՇԱՌԼ ՌԵՆՈՒՄ, Կաթողիկյա բղբերի մեկնության հայերեն փաղվածուն

Շառլ Ռենուի հրատարակած սույն քաղվածուն կամ շղթա-մեկնությունը, որ հայերեն ձեռագրերում կրում է «Հառաքումն մեկնութեան եւթնեցունց թղթոցն կաթողիկէիցն» վերնագիրը, հայ թարգմանական գրականության գիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնող հուշարձաններից մեկն է։ Մեկնության հուշարձանն բնագիրը, որի հեղինակ է համարվում ոմն Անդրեաս, հրատարակվել է դեռևս 1844 թ. Տ. Ա. Կրամերի կողմից, XII—XIII դդ. մի եզակի ձեռագրի հիման վրա։ 1924 թ. Կ. Շտաաբը շուրջ այլ ձեռագրերի տվյալների քննությամբ զգալիորեն լրացրել է այդ հրատարակության բերած գիտական արդյունքները, որով հնարավորություն է ստեղծվել ավելի խոր կերպով բացահայտելու բնագրի վերափոխման բարդ պատմությունը։ Մասնավորապես պարզվել է, որ խնդրո առարկա բնագիրը ծագում է մի նախնական շղթա-մեկնությունից, որը կազմված է եղել բացառապես անաթոլիական քաղվածքներից։ VII դարի վերջում այն զգալի վերակառուցման է ենթարկվել մի խմբագրի կողմից և լրացվել հայ-

րաբանության հեղինակությունների բազմաթիվ քաղվածքներով (էջ 12—13)։

Հայերեն թարգմանությունը Դրագարիկի առաջնորդ Բարսեղի պատվերով 1163 թ. իրականացրել է Դրիգոր գրիչը Կոստանդնուպոլսից բերված մի հունարեն նախօրինակի հիման վրա։ 1176 թ. կիրիկյան թարգմանական դպրոցի ավանդույթի համաձայն, այդ թարգմանությունը խմբագրել և գրական մշակման է ենթարկել ներսես Լամբրոնացին (էջ 13—14)։ Նշված տեղեկությունները քաղված են ժամանակին Կարմիր վանքի սեփականությունը հանդիսացող և Մեծ եղեռնին՝ զոհ գնացած մի ձեռագրի հիշատակարանից, որը բարեբախտաբար քանիցս հրատարակվել է հայ բանասերների կողմից, ինչպես, օրինակ, Բ. Կյուրյանի և Կ. Կաղվաժի «Անկիսիդիոյ Կարմիր-վանուց» ձեռագրացուցակում (Անթիլիաս, 1957, էջ 311)։

Իր բովանդակային ներածական հետազոտության մեջ (էջ 11—29) Շ. Ռենուն համակողմանի քննության է ենթարկում հայերեն թարգմանության հետ կապված բոլոր կարևոր բա-

Նախնական հարցերը, մանրամասներեն ներ-  
կայացնում մեկնության կառուցվածքային ա-  
ռանձնահատկություններն ու այն պարունակող  
հայերեն ձևագրերը, վերջանում թարգմանու-  
թյան ու սկզբնագրի ընդհանրություններն ու  
աարբերությունները և այլն: Այսպիսով, սույն  
ներածության շնորհիվ հուշարձանի հայերեն  
թարգմանությունը պատշաճ մակարդակով գի-  
տական լայն շրջանառության մեջ է դրվում  
հունա-բյուզանդական հայրաբանական գրակա-  
նության ուսումնասիրման ոլորտում:

Մեկնության հայերեն թարգմանության մեջ,  
ինչպես նրա հունարեն սկզբնագրում, կաթողիկ-  
յա թղթերից յուրաքանչյուրն սկսվում է մի հա-  
մառոտ նախադրությամբ: Սակայն հայերեն  
թարգմանության նախադրություններն էապես  
աարբերվում են ինչպես հունական նախօրինակի  
նախադրություններից, այնպես և ընդհանրապես  
նույն ընդմիջ մյուս բոլոր այլալեզու (լատինե-  
րեն, ասորերեն, հունարեն) բնագրերից: Նրանք  
աարբերվում են նաև Աստվածաշնչի հայերեն  
բնագրի համապատասխան նախադրությունե-  
րից: որոնք, ինչպես հայտնի է, XIII դարում  
կաշմել է Գեորգ Սկևտացին: Այս հանգամանքը,  
ինչպես իրավացիորեն նշում է աշխատասիրողը,  
կարող է ունենալ մի քանի բացատրություն. հնա-  
բանագրի է, որ այդ նախադրությունները եղել են  
հունարեն բնագրի այն օրինակում, որը Գրա-  
պարկ է բերվել Կոստանդնուպոլսից. բացառված  
չէ նաև, որ դրանք կաղմել է մեկնության հա-  
յերեն բնագրի խմբագիր Ներսես Լամբրոնացին.  
կամ էլ, որ նույնպես հավանական է, նրանք  
ծագում են մի ավելի Հին աղբյուրից: Բոլոր այս  
բացատրություններն էլ, սակայն, ինչպես տես-  
նում ենք, և ինչպես խոստովանում է ինքը հեղի-  
նակ էլ, բավարար չեն վերջնական եզրակա-  
ցությունների հանգեղու համար (էջ 15—17):

Նախադրություններին հաջորդում է բուն մեկ-  
նությունը՝ կաթողիկյա թղթերի տուն առ տուն  
բնաբաններով, որոնք լիովին համապատասխա-  
նում են Աստվածաշնչի հայերեն կանոնական  
բնագրին: Դա նշանակում է, որ թարգմանիչն  
այդ բնաբանները ոչ թե վերարտադրել է մեկ-  
նության հունարեն նախօրինակի հիման վրա,  
այլ պատրաստի կերպով վերցրել Աստվածաշնչի  
հայերեն թարգմանությունից: Իր ներածության  
բազմաթիվ էջերում (43—67) Նաու Ռենուն շուրս  
ձեռագրերի համեմատությամբ մանրամասներեն  
նշում է մեկնության բնաբանների բոլոր գրա-  
կան տարբերությունները Ձեռնապանի հրատա-  
րակած հայերեն Աստվածաշնչից, դրանով փաս-  
տորեն պատրաստի նյութ մատակարարելով Աստ-  
վածաշնչի հայերեն թարգմանության բնական  
բնագրի պատրաստման ուղղությամբ տարվելիք  
հետագա աշխատանքների համար:

Ինչ վերաբերում է մեկնողական քաղվածք-  
ներին կամ շղթա կազմող միավորներին, ապա  
դրանք հայերեն թարգմանության մեջ երեք կար-  
գի են. ա) անանուն քաղվածքներ, բ) քաղվածք-  
ներ հայտնի հեղինակների երկերից, գ) Ներսես  
Լամբրոնացուն վերագրված քաղվածքներ (էջ  
17—22): Հայերեն թարգմանության մեջ անա-  
նուն քաղվածքները թվով 282 են՝ հունարեն  
բնագրի 240-ի դիմաց, և դա այն դեպքում, երբ  
հունարեն նախօրինակի որոշ անանուն քաղ-  
վածքներ էլ հայերենում նշված են իրենց հեղի-  
նակների անուններով: Այս փաստը հավաստում  
է, որ հայերեն թարգմանությունը կատարվել է  
Կրամերի հրատարակած բնագրից զգալիորեն  
տարբեր հունարեն մի ընդօրինակությունից (էջ  
18—19): Ե. Ռենուի կարծիքով՝ հայերեն թարգ-  
մանությունն ավելի լավ է պահպանել անանուն  
քաղվածքներից կաղված նախնական շղթա-  
մեկնության պատկերը, քան հունարեն բնա-  
գիրը (էջ 19):

Հայտնի հեղինակների երկերից կատարված  
քաղվածքների դեպքում հայերեն թարգմանու-  
թյունը նույնպես որոշ տարբերություններ է  
դրսևորում հունարեն սկզբնագրի համեմատ: Այս-  
պես, օրինակ, հայերեն թարգմանության մեջ  
բացակայում է Փիլոնի անունը, սակայն մյուս  
կողմից, այստեղ ավելացված են Փեոդորոս  
Հերակլեացուն և ոմն Տիմոթեոսի անունները, բա-  
ցի այդ՝ միևնույն հեղինակների քաղվածքները  
հայերեն և հունարեն բնագրերում երբեմն տար-  
բեր խմբագրություններ են ներկայացնում (էջ  
20): Տվյալ հանգամանքը ևս մի անգամ հաս-  
տատում է, որ հայ թարգմանիչ ձեռքին իսկա-  
պես եղել է Կրամերի հրատարակած ձեռագրից  
տարբեր մի հունարեն սկզբնագիր (էջ 21): Ուշա-  
գրավ է Ե. Ռենուի հետևյալ դիտողությունը  
հայտնի հեղինակների քաղվածքների վերաբ-  
տադրության հարցում հայ թարգմանիչ կիրա-  
ռած սկզբունքի մասին: Ի տարբերություն սուրբ-  
գրական բնաբանների, որոնք, ինչպես ասացինք,  
Գրիգոր թարգմանիչը պատրաստի կերպով վերց-  
րել է Աստվածաշնչի հայերեն բնագրից, նա նույն  
մոտեցումը հանդես չի բերել հայրաբանական  
գրականության այն երկերի նկատմամբ, որոնց  
հայերեն թարգմանությունները գոյություն ունեն  
XII դարից շատ առաջ: Ինչ խոսք, հնագույն  
հայերեն թարգմանություններում համապատաս-  
խան հատվածների հայտնաբերումը մեծ ջանքեր  
կպահանջեր, այդ պատճառով ևլ Գրիգորը նախ-  
ընտրել է նման ընդմիջ քաղվածքները վերստին  
թարգմանել մեկնության հունարեն բնագրից:  
Ե. Ռենուն երկու բնորոշ օրինակով ակնառու է  
դարձնում այս փաստը (էջ 20—21):

Հայերեն և հունարեն բնագրերի ամենաէա-  
կան տարբերությունն իր արտահայտությունն է

գտել քաղվածքների երրորդ խմբում, որոնք վերադրվում են ներսես Լամբրոնացուն և բնականաբար բացակայում են հունական սկզբնագրում: Ներսեսի անունով նշանակված այդ քաղվածքները, որոնք թվով տասներկուսն են, դրված են մեկնության սկզբում, Հակոբի թղթի 1,1—2,2: Կամարների միջև, ընդմիջված այլ հեղինակների երկերից արտածված հատվածներով (էջ 21—22): Տարսոնի երիտասարդ եպիսկոպոսի մեկնողական գիտողություններն իրենց խորությամբ և տեսական մակարդակով ոչնչով չեն զիջում հայրաբանական գրականության ամենամեծ հեղինակությունների մտքերին, ուստի և ամենեին չեն խախտում մեկնության ամբողջականությունն ու միատարրությունը:

Ներածության հաջորդ երկու ենթաբաժինները նվիրված են մեկնության հայերեն ձեռագրերի քննությանը (էջ 23—26) և խնդրո առարկա հրատարակության առանձնատկությունների բացահայտմանը (էջ 27—29): Եթե, ինչպես վերը նշվեց, մեկնության հունարեն բնագիրը մեզ է հասել հատուկենտ ընդօրինակություններով, ապա հայերեն թարգմանությունը ներկայացված է անհամեմատ ավելի հարուստ ձեռագրական ավանդույթով: Ե. Ռենուի հաջողվել է հայկական ձեռագրերի աշխարհասփյուռ հավաքածուներում հայտնաբերել այդ հուշարձանի քսաներկու ընդօրինակություն, իրագործված XII—XIX դդ. ընթացքում, որոնք պերճախոս վկայությունն են հայ իրականության մեջ մեկնության վայելած լայն ժողովրդականության: Ձեռագրերից տասնութը, որոնք պահվում են Երեւանի, Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի մատենադարաններում, համեմատաբար ամբողջական են, երեքը՝ հատվածական, իսկ մեկը (Կարմիր վանքի 1176 թ. ձեռագիրը)՝ կորած: Մեկնության բնագիրը ամենից ավելի լիակատար և կանոնավոր կառուցվածքով պահպանվել է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի № 1301 ձեռագրում (XIV դար), որի վրա էլ բացառապես հիմնվում են Ե. Ռենուի իրագործած հրատարակությունն ու ֆրանսերեն թարգմանությունը: Միայն աստվածաշնչական բնաբանների տարբերակվածների վերհանման դեպքում որպես օժանդակ նյութ օգտագործված են նաև Երևանի № 1409 (XIII դար), Վենետիկի № 1462 (XII դար) և Վիեննայի № 1470 (XIII դար) ձեռագրերի տվյալները:

Ե. Ռենուի հրատարակության մեջ հուշարձանի հայերեն թարգմանությունն ամբողջական բնագրով չի ներկայացված. աշխատասիրողը նպատակահարմար է համարել կրճատել աստվածաշնչական բնաբաններն ու հնագույն հայերեն թարգմանություններով հայտնի մեկնողական քաղվածքները, բավարարվելով միայն հե-

տեյալ բնագրական միավորների հրատարակությամբ:

— Կաթողիկոս թղթերի նախադրությունները, որոնք տարբերվում են բոլոր առկա խմբագրություններից:

— Հայրաբանական գրականության այն հեղինակների քաղվածքները, որոնք հայտնի չեն հնագույն հայերեն թարգմանություններով:

— Ներսես Լամբրոնացուն վերագրվող տասներկու հատվածները:

— Հայերեն թարգմանության այն անանուն քաղվածքները, որոնք բացակայում են հունարեն բնագրում կամ վերջինիս նկատմամբ ինչ-ինչ տարբերություններ են դրսևորում:

Ինչպես տեսնում ենք, հայերեն թարգմանության ոչ մի յուրահատկություն այս ծրագրից դուրս չի մնացել, ուստի աշխատասիրողի մոտեցումը միանգամայն արդարացված կարելի է համարել, թեև, այնուամենայնիվ, հայագետների համար ցանկայի կլիներ իրենց տրամադրության տակ ունենալ հուշարձանի ամբողջական բնագիրը: Դրանով հանդերձ պետք է խոստովանել, սակայն, որ կորուստն այնքան էլ մեծ չէ. բավական է նշել, օրինակ, որ Հակոբի թղթի մեկնության 118 քաղվածքներից հրատարակվել է 88-ը, այսինքն՝ բնագրի երեք քառորդը:

Հնդհանուր ներածությունից բացի Ե. Ռենուն առանձին ներածական հոդված է կցել նաև Հակոբի թղթի մեկնությանը (էջ 30—67), որում հիմնականում ներկայացված է մեկնության հայերեն և հունարեն բնագրերի կառուցվածքային համադրությունը: Հասկանալի է, որ նույնպիսի ներածական հոդվածներ պետք է ունենան նաև մյուս թղթերի մեկնությունների հրատարակությունները:

Իսկ այժմ հարկ ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալ նաև հրատարակված բնագրին, առայժմ սահմանափակվելով միայն Հակոբի թղթի մեկնության շրջանակներով:

Հրատարակության հիմք-ձեռագիրը (Երուսաղեմ № 1301) աչքի է ընկնում համեմատաբար կանոնավոր ուղղագրությամբ, այդ պատճառով նույնքան կանոնավոր է նաև Ե. Ռենուի պատրաստած բնագրի ուղղագրությունը: Աշխատասիրողը շատ հազվադեպ է միջամտություն դրսևորել այս հարցում, բավարարվելով միայն բառավերջի ոչ. այ և ոչ գրության միօրինակության ապահովմամբ (էջ 29): Սակայն ցանկալի էր նույնպիսի հետևողականություն հանդես բերել նաև բնագրի ուղղագրական այլ շեղումների վերացման հարցում, մանավանդ որ նույնիսկ օգտագործված ձեռագիրը սխալագրությունների կողքին հաճախ պարունակում է միևնույն բառերի ճիշտ ձևերը: Այսպես, օրինակ. «թուղթ» (68, 2, 7, 17, 70, 4) փխ. «թուղթ» (70, 1, 7),

«Աղերսանդրացի» (74, 12) փխ «Աղերսանդրացի» (76, 6. 102, 6, 18. 134, 9), «Անդրո» (82, 1. 34, 15) փխ «Անտիո» (116, 1), «ցանգտսիրաց» (118, 9) փխ «ցանկասիրաց» (118, 10—«ցանկութիւն»), «փափաքել» (124, 13. 128, 14. 130, 5, 11. 132, 3) փխ «փափաքել» (130, 2) և այլն:

Հրատարակության մեջ երոսման հանդիպում են սխալ բառանշատման դեպքեր. «սովորեն» փխ «սովոր են» (74, 15. 110, 1), «աղքատն» փխ «աղքատ են» (74, 16), «շնորհէր» փխ «շնորհէր» (96, 1), «վարդապետ է» փխ «վարդապետէ» (104, 17), «ամէն իմաստն» փխ «ամէնիմաստն» (106, 18), «ենախանէ էին» փխ «ենախանէ էին» (112, 20), «շատ խառնութեամբն» փխ «շատխառնութեամբն» (116, 7. 134, 12), «զփրփուր սեռացեալ ալեացն» փխ «զփրփուր սեռացեալ ալեացն» (116, 8), «վտանգողն է» փխ «վտանգողն է» (122, 17), «Սրանցից մի քանիսն, իհարկե, տպագրական վրիպան կարելի է համարել:

Դժբախտաբար հրատարակված բնագրում տեղ են գտել նաև մի շարք այլ տպագրական վրիպակներ. «մուհակ» փխ «մուհակ» (70, 13), «զանկութենէն» փխ «ցանկութենէն» (80, 16), «կարուցէ» փխ «կորուցէ» (88, 4), «ենախապին» փխ «ենախապին» (96, 15), «հրդեհէ» փխ «հրդեհէ» (108, 14), «ուղղեորի» փխ «ուղղեորի» (110, 19), «լուցանէ» փխ «ցուցանէ» (114, 9), «մատենել» փխ «մատենել» (124, 24), «մեծատրութեան» փխ «մեծատրութեան» (128, 12), «խսպար» փխ «խսպար» (132, 14), «թշուարութեան» փխ «թշուարութեան» (136, 16), «վկայութիւն» փխ «վկայութիւն» (142, 13), «ենախակն» փխ «ենախակն» (146, 17), «հեղգութիւն» փխ «հեղգութիւն» (152, 6):

Բնագրի աշ ճիշտ ընկալման հետևանքով հազվադեպ պատահում են նաև սխալ թարգմանության դեպքեր: Այսպես, օրինակ, սխալ բառանշատման պատճառով հայերեն բնագրի «որպէս ասէ ամէնիմաստն (տպագրված է՝ ամէն իմաստն) Պաւղոսն նախադասութիւնը (106, 18) թարգմանության մեջ վերարտադրվել է. ainsi que le dit en toute vérité le Sage Paul ձևով, որ նշանակում է «ինչպես ամենայն ճշմարտությանը ասում է իմաստուն Պաւղոսը»: Ավելի էական է հայերեն բնագրի հետևյալ մտքի թարգմանության մեջ տեղ գտած սխալը. «Վասն այնորիկ արգելու զմեզ երգեալ յերկինս և յերկիր, զի մի հանցութեալ զարարածս գերի վերոյ քան զարարչին իշխանութիւն, առաւանձս առաւել զնոս» (144, 1—3). «աստուածն» բառը գրելով մեծատառով, Ե. Ռընուն բերված նախադասության վերջամասը թարգմանել է. c'est lui, Dieu, qui les a faites (ինքն՝ Աստված է, որ ստեղծել է նրանց), մինչդեռ հայերեն բնագրում ասված է հետևյալը. «նա (Հակոբը) մեզ այն պատճառով է արգելում երգվել երկնքով ու երկրով, որպեսզի մենք արարածներին արարչի իշխանությունից վեր չդասենք՝ նրանց աստվածներ դարձնելով»:

Այս մասնակի անճշտությունները, սակայն, ոչնչով չեն նսեմացնում գրախոսվող աշխատության ակնհայտ արժանիքները, որոնք այնքան շատ ու նշանակալից են, որ ներելի են դարձնում նման կարգի բոլոր թերացումները: Ե. Ռընուն հայագետների և բյուզանդագետների տրամադրության տակ է դրել մի օրինակելի հետազոտություն, որում լիովին բացահայտված է «Կաթողիկոս թղթերի մեկնության հայերեն քաղվածուի» բերած նպաստը հունարեն բնագրի վերականգնման և նրա բարդ պատմության լուսաբանման գործում:

3. CLAUDE E. COX, *Hexaplaric Materials Preserved in the Armenian Version*.—Society of Biblical Literature. Septuagint and Cognate Studies Series, 21.—Scholars Press, Atlanta, Georgia, 1986, XV + 236 p.

ԿԼՈՒԵ Ե. ԿՈՔՍ, Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ պահպանված Վեցիցյան նյութերը

Հայկական Աստվածաշնչի սկզբնագրերի հարցը վաղուց հետև դրադեցրել և այժմ էլ դրադեցնում է բազմաթիվ հետազոտողների: Հարցի առթիվ առաջ են քաշվել մի շարք տեսակետներ, որոնց համաձայն՝ Չին Կառնաբանը հայերեն է թարգմանվել հունարեն բնագրի Որոգիյան (Վեցիցյան) Ամմ Կենտրոն, Լուկիանյան և

Աղերսանդրյան խմբագրություններից: Վերջին շրջանի բնագրագիտական հետազոտությունները շնորհիվ տիրապետող է դարձել առաջին տեսակետը, որի ամրապնդման է նվիրված նաև Կլոք Կոքսի գրախոսվող աշխատությունը:

Ինչպես հայտնի է, Աստվածաշնչի հունարեն Յոթնասնից թարգմանությունը (Septuaginta)

կատարվել է մ. թ. ա. III դարում նգիպտոսի՝ չրեական համայնքի միջավայրում՝ նրա սեփական կարիքների բավարարման համար։ Հայտնի է նաև, որ այդ թարգմանությունը զգալիորեն տարբերվում է Աստվածաշնչի եբրայական ընդհանուր բնագրից՝ այսպես կոչված Մասորական խմբագրությունից։ Մասնագետներն այս իրողությունը բացատրում են երկու հանգամանքով. առաջին՝ տարբերությունների առաջացման մեջ որոշակի դեր են խաղացել չրեա թարգմանիչները, և երկրորդ՝ որ ավելի էական է, Յոթանասինգ թարգմանությունն իրագործվել է Մասորական բնագրից տարբեր մի եբրայական նախորդականի հիման վրա։ Նկատի ունենալով մի կողմից նշված իրողությունը, իսկ մյուս կողմից այն, որ Յոթանասինգ աստիճանաբար դառնում էր քրիստոնյաների սուրբ գիրքը, մ. թ. II դարում երեք հուդայական գիտուններ՝ Ակուլաբու, Սիմաբուսը և Քեոդոտիսը, իրարից անկախ ձեռնարկում են Աստվածաշնչի նոր հունարեն թարգմանությունները։ Յոթանասինգ թարգմանության և եբրայական բնագրի տարբերության խնդիրը մշտահոգում է նաև Երեսնամյա աստվածաբաններին։ Այդ իսկ պատճառով նոր կրոնի մեծագույն հեղինակություններից մեկը՝ Որոգինես (Օրիգենես) Աղեքսանդրացին (մ.ա. 253/4 թ.), կաղմում է աստվածաշնչական բնագրերի վեց սյունակներում ամփոփված մի համագրություն, որն ընդգրկում էր. 1. Եբրայական բնագիրը, 2. Եբրայական բնագրի հունական տառադարձությունը, 3. Ակուլաբու թարգմանությունը, 4. Սիմաբուսի թարգմանությունը, 5. Յոթանասինգ բնագիրը, 6. Քեոդոտիսի թարգմանությունը։

Որոգինեսի բուն բնագրագիտական աշխատանքն արտացոլված էր 5-րդ սյունակում, որտեղ Ակուլաբու, Սիմաբուսի և Քեոդոտիսի թարգմանությունների հիման վրա նշված էին Յոթանասինգ և եբրայական բնագրերի տարբերությունները, վերջինիս այն հատվածները, որոնք ռացակալում էին Յոթանասինգ բնագրում, նշանակված էին աստղանիշերով (asteriscus), իսկ Յոթանասինգի այն հատվածները, որոնք, ընդհակառակը, պակասում էին եբրայական բնագրում՝ բրգածն նշաններով (obelus)։ Բացի այդ, Որոգինյան ընթերցվածների ավարտը ցույց տալու համար գործածված էր ևս մի նշան՝ կաղմված երկու կետից (metobelus)։ Ինչպես նշում է Կ. Կոքսը (էջ 2), Որոգինեսի հսկայական աշխատությունն, ըստ երևույթին, երբեք ամբողջությամբ չի ընդօրինակվել և հավանաբար ոչնչացվել է պաղեստինյան Կեսարիայում, VII դարի արաբական արշավանքների տարիներին։ Մինչդեռ իրա 5-րդ սյունակը, այսինքն՝ Որոգինյան խմբագրությունը, մեծ ժողովրդական-

եություն է վայելել և հաճարյա լիովն գործածությունից դուրս մղել Յոթանասինգի ինքնավանդությամբ։ Բավական է նշել, որ միայն Կեստանդին Մեծի պատվերով պատրաստվել է այդ բնագրի հիսուն ընդօրինակություն և ուղարկվել Կոստանդնուպոլիս։

Որոգինյան խմբագրության արժեքը կայանում է նրանում, որ նա ցույց է տալիս, թե ինչպիսի վիճակ է ունեցել Յոթանասինգ բնագիրը մ. թ. III դարում (էջ 2—3), դրանով իսկ շահագնաց կարևոր նշանակություն ձեռք բերելով վերջինիս պատմության ուսումնասիրման տեսանկյունից։ Սակայն, զգալիորեն, չնայած իր բեմի տարածվածությանը, այդ խմբագրությունը մեղ է հասել խիստ անկատար և անբավարար վիճակում։ Նրա հիմնական վկայություններն են՝ Պողոս Բելլացու (VII դար) իրագործած Աստղանիշիցիան թարգմանությունը (Syrohexapla) և Աստվածաշնչի հունարեն Ը ձեռագիրը (IV—V դդ.)։ Կան նաև որոգինյան աստղանշաններ պարունակող մի շարք այլ հունարեն ձեռագրեր (էջ 3)։ Նյութի նման սակավության պայմաններում առաջնակարգ նշանակություն է ստանում հայերեն ձեռագրերում պահպանված որոգինյան նշանների ուսումնասիրությունը, որին և մասնագիտական խոր հմտությամբ ձեռնարկել է կանադադի հարգարժան հայագետը։

Կ. Կոքսի աշխատությունից պարզվում է, որ հայերեն ձեռագրերն աչքի են ընկնում որոգինյան բնագրական նշանների համեմատաբար առատ գործածությամբ։ Դրանով մեկ անգամ ևս հաստատվում է Կորյունի այն տեղեկությունը, որի համաձայն՝ Աստվածաշնչի վերջնական հայերեն թարգմանությունը կամ սրբագրությունը կոմսոսի ժողովից (431 թ.) հետո կատարվել է Կոստանդնուպոլսից բերված հունարեն ձեռագրերի հիման վրա, իսկ Կոստանդնուպոլսում, ինչպես վերը նշվեց, այդ ժամանակ լայնորեն տարածված էր Որոգինյան խմբագրությունը (էջ 3)։ Աշխատասիրողը չի բացառում, որ որոշ հայերեն ձեռագրերում որոգինյան նշանները կարող են ավելացված լինել միջնադարի հետաքրքրասեր վարդապետների կողմից, սակայն միաժամանակ համոզմունք է հատնում, որ իրենց հիմնական մասով նրանք արտացոլում են V դարի բնագրական վիճակը (էջ 3—4,9)։

Ուսումնասիրելով Աստվածաշնչի բոլոր հայերեն ընդօրինակությունները, Կ. Կոքսն ընտրել և իր աշխատության մեջ օգտագործել է որոգինյան նշաններ պարունակող հետևյալ երեսունհինգ ձեռագրերը. Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 17, 177, 188, 345, 354, 2537, 2628, 2658, 2669, 4905, Երեսնամյա Հայոց պատմության թիվերի №№ 297, 428, 542, 1137, 1925, 1927, 1928, 1934, 2557, 2560, 2561, 3043,

Վենետիկի Միխիթարյան մատենադարանի ՄՄ 375, 841, 935, 1005, 1182, 1507, 1508, 1634, Վիեննայի Միխիթարյան մատենադարանի ՄՄ 39, 71, Լենինգրադի էրմիտաժի ՎՊ—1011, Բրիտանական թանգարանի ՕՏ. 3833 և Բրիտանական աստվածաշնչական ընկերության սեփականությունը հանդիսացող մի ձեռագիր (էջ 5—8)։ Նշված ձեռագրերից հնագույնը ծրուսաղեմի Հայոց պատրիարքարանի Մ 1925 ձեռագիրն է, ընդգրկված 1269 թ.։ Փանակական առումով, այսինքն՝ որոգիսյան նշանների գործածության հաճախականությամբ առանձնանում են Վենետիկի Միխիթարյան մատենադարանի ՄՄ 841, 935, Նրուսաղեմի Հայոց պատրիարքարանի ՄՄ 428, 1925, Մաշտոցի անվան Մատենադարանի Մ 177 և Բրիտանական թանգարանի ՕՏ. 8833 ձեռագրերը։ Աշխատասիրողն արդարացիորեն որոգիսյան նշանների գործածության ավանդույթի հետևյալն և տարածվածության վկայություն է համարում այն հանգամանքը, որ այդ ձեռագրերը ոչ թե ծագում են մեկ աշխարհագրական միջավայրից, այլ ընդգրկված են պատմական Հայաստանի և հայկական գաղթաշխարհի տարբեր վայրերում (էջ 8)։ Հատկանշական է նաև այն, որ ձեռագրերից ոչ մեկը լիովին չի ընդգրկում հայկական ավանդույթով հայտնի որոգիսյան նշանների ամբողջությունը (էջ 8—9)։

Վերը նշված փաստերը, ինչպես կարելի էր կռահել մեր շարադրանքից, հիմնականում արձանագրված են գրախոսվող գրքի ներածության մեջ (էջ 1—15)։ Ինչ վերաբերում է բուն աշխատությանը, ապա նրանում մանրակրկիտ բնագրական համեմատություններով ներկայացված են հայերեն ձեռագրերի պարունակած բոլոր որոգիսյան ընթերցվածները (էջ 17—219), որոնք որպես պատրաստի նյութ կարող են օգտագործվել Յոթանասնից բնագրի քննական հրատարակության ուղղությամբ տարվելիք հետագա աշխատանքների ընթացքում։ Որոգիսյան նշանները քննված են Աստվածաշնչի գրքերի հերթագայության կարգով։ Յուրաքանչյուր գրքի նվիրված առանձին բաժնում կանոնավորապես նշված են՝ ուսպանված նշանների քանակը, օգտագործված ձեռագրերի համարները, Յոթանասնից բնագրի համեմատվող հրատարակությունները, նշանների գործածության առանձնահատկությունները, նրանց տեղաբաշխումը, և վերջապես, բուն ընթերցվածներն ու այս բոլորից բխող եզրակացությունները։

Գրքի վերջաբանում (էջ 221—223) ի մի են բերված հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ակնհերե են դարձնում հայկական ավանդույթի օգտակարությունը Յոթանասնից բնագրի պատմության վերականգնման գործում։

Հայերեն ձեռագրերում պապանված որոգիսյան նշանների ընդհանուր թիվը հավասար է 1461-ի, որոնցից 1227-ը՝ աստղանիշ, իսկ 234-ը՝ բրգաձև նշան։ Ընդ որում, նշաններից 161-ը (114 աստղանիշ և 47 բրգաձև նշան) վկայված են միայն հայերեն ձեռագրերում, որով զգալիորեն լրացվում են օտարալեզու աղբյուրների տվյալները Որոգիսյան խմբագրության մասին։ Համեմատաբար շատ են Աստվածաշնչի հետևյալ գրքերում պապանված նշանները՝ Մենդոց (139), Ելից (376), Հեսու (203), Դատավորաց (51), Թագավորությանց (160), Հոր (117), Ծալի (91), Երեմիա (241) և Եզեկիել (63)։ Հատուկ նշաններ են վկայված Ղևտացվոց (2), Թվոց (1), Բ Օրինաց (9), Հոսթի (2), Բ Մնացորդաց (1), Ծաթերի (1), Առակաց (4) և Ամովսի (1) գրքերում։ Իսկ Եզրի, Նահմիայի, Սաղմոսաց, Ժողովողի, Երգ երգոց, Ողբ Երեմիո, Դանիելի և ԺԲ մարգարեների (բացի Ամովսից) գրքերի հայերեն ձեռագրերում որոգիսյան նշաններն ընդհանրապես բացակայում են։ Կոքսի կարծիքով՝ սա զեռես չի նշանակում, թե այս վերջին գրքերի հայերեն թարգմանություններն ավելի քիչ են ազդված Որոգիսյան խմբագրությունից, քան նրանք, որոնք աչքի են ընկնում որոգիսյան նշանների առատ գործածությամբ, և միայն յուրաքանչյուր գրքի քննական ուսումնասիրությունը կարող է վերջնական պատասխան տալ այս հարցին (էջ 222)։

Իր աշխատությունը հեղինակը եզրափակում է հետևյալ ընդհանուր դատողությամբ. ակնհայտ է, որ Աստվածաշնչի հայերեն բնագիրն այսուհետև պետք է հաշվի առնվի Որոգիսիսի երկին վերաբերող ցանկացած հետազոտության զեպքում։ Սույն աշխատության տվյալներն անմիջական հետաքրքրություն են ներկայացնում Յոթանասնիցի բնագրական քննության տեսակետից, մանավանդ նրա այն գրքերի համար, որոնց քննական բնագրերը զեռես գոյություն չունեն (Ելից, Դատավորաց, Թագավորությանց և այլն)։ Այս առումով անհրաժեշտություն է առաջանում նաև վերանայել Յոթանասնիցի զոթինգենյան հրատարակության այն գրքերի բնագրերը, որոնց պատրաստման ընթացքում հայերեն թարգմանությունն օգտագործվել է անբավարար չափով կամ ամենևին անտեսվել է (էջ 222)։

Ինչպես տեսնում ենք, գրախոսվող աշխատությունը միաժամանակ կարևոր ներդրում է հանդիսանում թե՛ հայագիտության և թե՛ աստվածաշնչական բնագրագիտության բնագավառում։ Կ. Կոքսն այս նոր գրքով հաստատում է Աստվածաշնչի հայերեն բնագրի հմուտ հետազոտողի իր արժանի համբավը։ Հիշեցնենք, որ նա մեղանում հայտնի է նաև Երկրորդ Օրինաց գրքի հայերեն թարգմանության իր օրինակելի

գիտական հրատարակության (մեր դասիստությունը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 199—202), ինչպես նաև Զոհրապյան Աստվածաշնչի լուսատիպ նմանահանութան իրազորմամբ (reprint Delmar, NY: Caravan Books, 1985):

Ավարտելով մեր գրախոսությունը, հարկ ենք համարում հեղինակի ուշադրությունը հռավիրել որողինյան նշաններ պարունակող ևս մի հայերեն ձեռագրի վրա, որը դուրս է մնացել նրա տեսադաշտից: Խոսքը վերաբերում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 985 ձեռագրի ճաշոցին, որը հնագրական տվյալներով թվագրվում է IX—X դդ. և, ինչպես պարզել է Շ. Ռընուն, իրենից ներկայացնում է հնագույն երուսաղեմյան ծիսակարգի հայերեն վերարտադրությունը (տե՛ս Շ. Ռընուն, «Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը, «Պատմա-բանասիրական հանդես»,

1987, № 2, էջ 25—45): Ա. Զեյթունյանի հավաստիացմամբ՝ սա մեղ հայտնի ամենահին հայերեն ձեռագիրն է, որն ունի հիշյալ նշանները (տե՛ս Գիրք Մանդոց. քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, 1985, էջ 134): Մեր ստուգումներից պարզվեց, որ ձեռագիրն իսկապես պարունակում է որողինյան նշաններով դրոշմված բազմաթիվ բնթերցվածներ, որոնցից շատերն, ի դեպ, հայտնի չեն հայկական ավանդույթի մյուս վկայություններով, ինչպես, օրինակ, Յովք լճ. 1, 20, Երեւիա լճ. 22, 25, 24, 26, 28, 30, 32, 36, 40, 43 և այլ համարներում (հմմտ. ձեռ. № 985, էջ 19ա—23բ): Տվյալ փաստը, մեր կարծիքով, որողակի հետաքրքրություն է ներկայացնում, հետևաբար ակնհայտ է, որ նշված ձեռագիրն արժանի է հատուկ մասնագիտական քննության:

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ